

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
"ՓՄՁ ներդրումներ" ՈՒՎԿ ՓԲԸ
բաժնետերերի ընդհանուր ժողովի
09.06.2009թ-ի թիվ 1 որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ կենտրոնական բանկում
"07" օգոստոսի 2009թ.
"ՓՄՁ ներդրումներ" ՈՒՎԿ ՓԲԸ
գրանցման համարը 28

Փոփոխված է

Փոփոխությունը գրանցված է

Բաժնետերերի ընդհանուր ժողովի
24.06.2011թ-ի թիվ 25 որոշմամբ

16/08/ 2011թ. թիվ 1/917Ա որոշմամբ

Բաժնետերերի ընդհանուր ժողովի
28.11.2012թ-ի թիվ 36 որոշմամբ

26/12/2012թ. թիվ 1/1383Ա որոշմամբ

Բաժնետերերի ընդհանուր ժողովի
25.01.2013թ-ի թիվ 37 որոշմամբ

04/03/2013թ. թիվ 1/157Ա որոշմամբ

Բաժնետերերի ընդհանուր ժողովի
19.06.2015թ-ի թիվ 42 որոշմամբ

Բաժնետերերի ընդհանուր ժողովի
23.06.2016թ-ի թիվ 46 որոշմամբ

Բաժնետերերի ընդհանուր ժողովի
05.09.2017թ-ի թիվ 50 որոշմամբ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝

ՀՀ էկոնոմիկայի նախարար, "ՓՄՁ
ներդրումներ" ՈՒՎԿ ՓԲԸ
բաժնետերերի ընդհանուր ժողովի
նախագահ՝



Ս. Կարապետյան

Ա. Զավադյան



ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

/Նոր խմբագրությամբ/

"ՓՄՁ ներդրումներ" ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ
բաժնետիրական ընկերության

Հոդված 1. Ընդհանուր դրույթներ

1.1. "ՓՄՁ ներդրումներ" ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Վարկային կազմակերպություն) իրավաբանական անձ է, որը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրված լիցենզիայի հիման վրա և համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության և սույն Կանոնադրության՝ իրավունք ունի իրականացնել "Վարկային կազմակերպությունների մասին" ՀՀ օրենքով սահմանված գործունեության տեսակները:

1.2. Վարկային կազմակերպությունը հիմնադրվել է փակ բաժնետիրական ընկերության կազմակերպական-իրավական ձևով:

1.3. Վարկային կազմակերպության լրիվ ֆիրմային անվանումն է.

հայերեն՝ "ՓՄՁ ներդրումներ" ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն

անգլերեն՝ "SME Investments" universal credit organization closed joint stock company

ռուսերեն՝ "МСП инвестиции" универсальная кредитная организация закрытое акционерное общество

Վարկային կազմակերպության կրճատ անվանումն է.

հայերեն՝ "ՓՄՁ ներդրումներ" ՈՒՎԿ ՓԲԸ

անգլերեն՝ "SME Investments" UCO CJSC

ռուսերեն՝ "МСП инвестиции" УКО ЗАО

1.4. Վարկային կազմակերպության իրավաբանական հասցեն է.

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Արաբկիր Ն. Զարյան փողոց, 74 շենք, 277 շին.:

1.5. Վարկային կազմակերպությունն ունի իր ֆիրմային անվանումով, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից սահմանված այլ վավերապայմաններ պարունակող կլոր կնիք: Վերջինս պարունակում է Վարկային կազմակերպության ֆիրմային անվանումը հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով:

1.6. Վարկային կազմակերպությունը հիմնադրված է անորոշ ժամկետով:

1.7. Վարկային կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, իրավունք ունի իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ և դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.8. Վարկային կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում իր բաժնետերերի պարտավորությունների համար: Վարկային կազմակերպության պարտավորությունների համար նրա բաժնետերերը պատասխանատվություն են կրում իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում:

Հ ո դ վ ա ծ 2. Վ ար կ ա յ ի ն կ ա զ մ ա կ եր պ ու թ յ ա ն գ ո ռ ծ ա ճ ն ու թ յ ու ն ն եր ը

2.1. Վարկային կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող է իրականացնել հետևյալ ֆինանսական գործառնությունները կամ դրանց մի մասը՝

ա) ներգրավել փոխառություններ և (կամ) կնքել նմանատիպ գործարքներ իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի, իր մասնակիցների, Հայաստանի Հանրապետության և համայնքների, այլ պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ,

բ) տրամադրել վարկեր, փոխառություններ, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ,

գ) տրամադրել երաշխիքներ,

դ) թողարկել արժեթղթեր, ինչպես նաև իր հաշվին և իր անունից արժեթղթերով գործարքներ կատարել,

ե) մատուցել վարկային կազմակերպության գործունեության հետ կապված վճարահաշվարկային ծառայություններ,

զ) թողարկել ածանցյալ ֆինանսական գործիքներ, ինչպես նաև իր հաշվին և իր անունից կնքել ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքներ,

է) մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց ներդրումները, իրականացնել հավատարմագրային (լիազորագրային) կառավարում,

ը) իրականացնել ներդրումային ֆոնդի կառավարում,

թ) գնել, վաճառել և կառավարել բանկային ոսկի և ստանդարտացված ձուլակտորներ և մետաղադրամ,

ժ) գնել և վաճառել արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ,

ի) իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ),

լ) ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ,

խ) մատուցել ֆինանսական խորհրդատվություն,

խա) ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի հետ ստացման գործունեություն,

խբ) Կենտրոնական բանկի համաձայնությամբ իրականացնել վարկային կազմակերպություններին բնորոշ միջազգային պրակտիկայում ընդունված այլ գործառնություններ,

ծ) իրականացնել օրենքով և ենթօրենսդրական իրավական ակտերով վարկային կազմակերպությունների համար թույլատրված այլ գործառնություններ:

2.2. Վարկային կազմակերպությունը հրապարակային օֆերտայի միջոցով փոխառություններ չի ներգրավում:

2.3. Վարկային կազմակերպությունը ֆինանսական գործառնություններն իրականացնում է կանխիկ և անկանխիկ եղանակով:

Հ ո դ վ ա ծ 3. Վ ա ր կ ա յ ի ն կ ա զ մ ա կ ե ր պ ո թ յ ա ն կ ա ն ո ն ա դ ր ա կ ա ն կ ա պ ի տ ա լ ը, ա յ լ կ ա պ ի տ ա լ ն ե ր և ա կ տ ի վ ն ե ր

3.1. Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալը կազմում է 2,260,500,000 (երկու միլիարդ երկու հարյուր վաթսուն միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

3.2. Վարկային կազմակերպության տեղաբաշխված բաժնետոմսերի քանակը կազմում է 1507 (մեկ հազար հինգ հարյուր յոթ) բաժնետոմս, որից 1137-ը (մեկ հազար մեկ հարյուր երեսունյոթ) **հասարակ (սովորական), իսկ 370-ը** (երեք հարյուր յոթանասուն) Ա դասի **փոխարկելի արտոնյալ**, յուրաքանչյուրը՝ 1.500.000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով: Բաժնետոմսերը լրիվ վճարված են:

2020թ-ի հունվարի 1-ից թվով 370 Ա դասի արտոնյալ բաժնետոմսերը փոխարկվում են թվով 370 հասարակ (սովորական) բաժնետոմսերի:

3.3. Վարկային կազմակերպության հայտարարված կանոնադրական կապիտալը համալրվում է բացառապես ՀՀ դրամով:

3.4. Վարկային կազմակերպությունն իրավունք ունի բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու կամ լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխելու միջոցով ավելացնել իր կանոնադրական կապիտալը:

3.5. Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալը կարող է նվազեցվել միայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

3.6. Վարկային կազմակերպությունն ունի պահուստային հիմնադրամ (գլխավոր պահուստ)՝ կանոնադրական կապիտալի առնվազն 15 տոկոսի չափով: Եթե Վարկային կազմակերպության պահուստային կապիտալը կազմում է սույն կանոնադրությամբ սահմանված չափից ավելի փոքր մեծություն, ապա հատկացումները պահուստային կապիտալին կատարվում են շահույթի 5 տոկոսից ոչ պակաս չափով, ինչպես նաև համալրվում է նոր թողարկված արժեթղթերի անվանական արժեքի և դրանց տեղաբաշխման արժեքի տարբերությունից ստացվող միջոցներից:

Պահուստային կապիտալն օգտագործվում է Վարկային կազմակերպության կորուստները ծածկելու, ինչպես նաև պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Վարկային կազմակերպության շահույթն ու այլ միջոցները դրա համար չեն բավարարում:

Պահուստային կապիտալն այլ նպատակներով չի կարող օգտագործվել:

Հողված 4. Վարկային կազմակերպության բաժնետոմսերը, բաժնետերերի իրավունքները և պարտականությունները

4.1. Վարկային կազմակերպությունը կարող է թողարկել և տեղաբաշխել ՀՀ օրենսդրությամբ սահմանված բաժնետոմսեր, պարտատոմսեր և այլ արժեթղթեր:

4.2. Վարկային կազմակերպությունն իրավունք ունի բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ տեղաբաշխել հասարակ (սովորական), ինչպես նաև մեկ կամ մի քանի տեսակի արտոնյալ բաժնետոմսեր:

Վարկային կազմակերպության կողմից տեղաբաշխվող արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքը չպետք է գերազանցի Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի 25 տոկոսը:

4.3. Վարկային կազմակերպությունն ունի տեղաբաշխված հասարակ (սովորական) և Ա դասի արտոնյալ փոխարկելի բաժնետոմսեր: 2020թ-ի հունվարի 1-ից հետո Վարկային կազմակերպության Ա դասի բաժնետոմսերը կդառնան հասարակ (սովորական):

4.4. Վարկային կազմակերպության որոշակի տեսակի ամեն մի արտոնյալ բաժնետոմս ունի միևնույն անվանական արժեքը:

4.5. Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը բաժնետերերի ընդհանուր ժողովում չունեն ձայնի իրավունք (բացառությամբ Վարկային կազմակերպության լուծարման կամ վերակազմակերպման հարցերի մասին քվեարկությունից)՝ բացառությամբ Ա դասի արտոնյալ փոխարկելի բաժնետոմսերի:

4.6. Վարկային կազմակերպության յուրաքանչյուր հասարակ (սովորական) և Ա դասի արտոնյալ բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքներ, բացառությամբ Կանոնադրության 6-րդ հոդվածով նախատեսված իրավունքների:

4.7. Վարկային կազմակերպության հասարակ (սովորական) և Ա դասի արտոնյալ բաժնետոմսի սեփականատերը ՀՀ օրենսդրության և սույն Կանոնադրության համաձայն իրավունք ունի՝

ա) մասնակցել Վարկային կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով, ժողովներում հանդես գալ առաջարկություններով և քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով,

բ) մասնակցել Վարկային կազմակերպության կառավարմանը,

գ) ստանալ շահութաբաժիններ՝ Վարկային կազմակերպության գործունեությունից առաջացած շահույթից,

դ) առաջնահերթ կարգով ձեռք բերել Վարկային կազմակերպության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ,

ե) ստանալ Վարկային կազմակերպության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում՝ ծանոթանալ ֆինանսական

հաշվետվություններին,

գ) ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,

է) դիմել դատարան՝ ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին ու այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,

ը) Վարկային կազմակերպության լուծարման դեպքում ստանալ ընկերության գույքի իր հասանելիք մասը,

թ) իրականացնել ՀՀ օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներ:

4.8. Վարկային կազմակերպության յուրաքանչյուր բաժնետեր իրավունք ունի անվճար ստանալու Վարկային կազմակերպության վերջին տարեկան հաշվետվության և վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) եզրակացության պատճենները:

4.9. Վարկային կազմակերպության յուրաքանչյուր բաժնետեր իրավունք ունի ծանոթանալ ֆինանսական հաշվետվություններին և օրենքով սահմանված այլ փաստաթղթերին, ինչպես նաև անվճար ստանալ այդ փաստաթղթերի պատճենները բաժնետիրոջ գրավոր դիմումի հիման վրա՝ դիմումը Վարկային կազմակերպությանը ներկայացնելու պահից հինգ օրվա ընթացքում:

4.10. Վարկային կազմակերպությունն իրավունք ունի համախմբել (կոնսոլիդացնել) տեղաբաշխված բաժնետոմսերը, որի արդյունքում Ընկերության երկու կամ ավելի բաժնետոմսերը փոխարկվում են նույն տեսակի (դասի) մեկ նոր բաժնետոմսի:

4.11. Վարկային կազմակերպությունն իրավունք ունի բաժանել տեղաբաշխված բաժնետոմսերը, որի արդյունքում Ընկերության տեղաբաշխված մեկ բաժնետոմսը փոխարկվում է նույն տեսակի (դասի) երկու կամ ավելի բաժնետոմսերի:

4.12. Վարկային կազմակերպության բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրի վարումն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվում է ՀՀ կենտրոնական դեպոզիտարիայի կողմից:

4.13. Վարկային կազմակերպությունն իրավունք ունի բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ թողարկել պարտատոմսեր՝ կանոնադրական կապիտալի չափը չգերազանցող գումարով:

Հ ո ղ վ ա ծ 5. Ն ա խ ա պ ա տ վ ու թ յ ա ն ի ի Ր Ա Վ Ո Ւ Ք

5.1. Բաժնետոմսերի լրացուցիչ տեղաբաշխման դեպքում Վարկային կազմակերպության բաժնետերերը օգտվում են կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասին համամասնորեն տեղաբաշխվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունքից, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

5.2. Բաժնետոմսերի տեղաբաշխումն սկսվելու օրվանից առնվազն 30 օր առաջ Վարկային կազմակերպության բաժնետերերը գրավոր ծանուցվում են նախապատվության իրավունքի՝ իրենց կողմից իրականացման հնարավորության մասին: Ծանուցումը պետք է պարունակի ՀՀ օրենսդրությամբ սահմանված տեղեկություններ:

5.3. Բաժնետերն իրավունք ունի իրականացնել իր նախապատվության իրավունքը լրիվ ծավալով կամ մասնակիորեն՝ բաժնետոմսերի ձեռքբերման մասին Վարկային կազմակերպությանը գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով, որը պետք է պարունակի ՀՀ օրենսդրությամբ սահմանված տեղեկություններ: Ընդ որում, ծանուցումը պետք է ներկայացվի բաժնետոմսերի տեղաբաշխումն սկսելու օրվանից ոչ ուշ, քան մեկ օր առաջ:

5.4. Եթե Վարկային կազմակերպության որևէ բաժնետեր օտարում է իր բաժնետոմսերը, ապա Վարկային կազմակերպության մյուս բաժնետերերը օգտվում են վաճառվող բաժնետոմսերն իրենց բաժնեմասին համամասնորեն ձեռք բերելու նախապատվության իրավունքից՝ այդ բաժնետոմսերի իրացման մասին գրավոր ծանուցվելու պահից 30 օրացուցային օրվա ընթացքում: Եթե բաժնետիրոջ կողմից վաճառվող բաժնետոմսերը՝ գնելու առաջարկի պահից 30 օրացուցային օրվա ընթացքում ձեռք չեն բերվել Վարկային կազմակերպության բաժնետերերի կողմից, ապա Վարկային կազմակերպությունն իրավունք ունի ձեռք բերել այդ բաժնետոմսերը: Վարկային կազմակերպության կողմից բաժնետոմսերը ձեռք բերելուց հրաժարվելու կամ դրանց գնի վերաբերյալ համաձայնության չգալու դեպքում վաճառվող բաժնետոմսերի սեփականատերը կարող է առաջարկել դրանք երրորդ անձանց՝ իր կողմից սահմանված պայմաններով (սակայն ոչ ավելի բարենպաստ պայմաններով, քան սահմանված են եղել բաժնետերերի համար):

Շ ո ղ վ ա ծ 6. Վ ա Ր կ ա յ ի ն կ ա զ մ ա կ եր պ ու թ յ ա ն շ ա հ ու թ ա բ ա ժ ի ն ն եր ի վ ճ ա ր մ ա ն կ ա ր գ ը

6.1. Վարկային կազմակերպությունն իրավունք ունի որոշում ընդունել (հայտարարել) տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց միջանկյալ /եռամսյակային և կիսամսյակային/ կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին: Շահութաբաժինները վճարվում են Վարկային կազմակերպության զուտ շահույթից՝ բացառությամբ Կանոնադրության 6.3 կետի:

6.2. Վարկային կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշում ընդունել առանձին տեսակների և դասերի բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ չվճարելու կամ ոչ լրիվ չափով վճարելու վերաբերյալ:

6.3 Յուրաքանչյուր Ա դասի արտոնյալ բաժնետոմսի համար 2017թ-ին, 2018թ-ին և 2019թ-ին սահմանվում է տարեկան շահութաբաժին 1,176 հազ ՀՀ դրամ գումարի չափով: Ընդ որում 2017թ-ի համար Ա դասի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց վճարվող շահութաբաժինը սահմանվում է Ա դասի արտոնյալ բաժնետոմսի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցմանը հաջորդող տվյալ տարվա օրերին համապատասխան: Հաշվարկների համար հիմք է ընդունվում տարին 365 օր:

6.4. Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է ժողովի որոշմամբ: Միջանկյալ /եռամսյակային և կիսամսյակային/ շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է խորհրդի միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունման պահից 30 օր անց:

6.5. Վարկային կազմակերպությունն իրավունք չունի որոշում ընդունել տեղաբաշխված

բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարման մասին, եթե՝

ա) լրիվ չի վճարվել Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալը "Բաժնետիրական ընկերությունների մասին" ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի դրույթներին համապատասխան,

բ) Վարկային կազմակերպությունը հետ չի գնել բոլոր բաժնետոմսերը,

գ) շահութաբաժինների վճարման մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ Վարկային կազմակերպության տնտեսական ցուցանիշները համապատասխանում են օրենքով սահմանված անվճարունակության հատկանիշներին կամ նշված հատկանիշներն ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով,

դ) Վարկային կազմակերպության զուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից կամ կպակասի շահութաբաժինների վճարման հետևանքով:

Հ ո դ վ ա ծ 7. Վ ա ր կ ա յ ի ն կ ա զ մ ա կ ե ր պ ու թ յ ա ն կ ա ռ ա վ ա ր մ ա ն մ ա ր մ ի ն ն ե ր ը

7.1. Վարկային կազմակերպության կառավարման մարմիններն են՝

ա) Բաժնետերերի ընդհանուր ժողովը.

բ) Խորհուրդը.

գ) Գործադիր տնօրենը:

Հ ո դ վ ա ծ 8. Բ ա ժ ն ե տ ե ր ե ր ի ը ն դ հ ա ն ու ր ժ ո ղ ո վ ը

8.1. Վարկային կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինը նրա Բաժնետերերի ընդհանուր ժողովն է:

8.2. Բաժնետերերի տարեկան ժողովը գումարվում է Վարկային կազմակերպության հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում:

8.3. Անհետաձգելի հարցերի քննարկման համար կարող է գումարվել բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով: Արտահերթ ժողովը գումարվում է խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, Վարկային կազմակերպության գործադիր մարմնի, վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի), Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

Արտահերթ ժողովը կարող է անցկացվել հեռակա քվեարկության (հարցման) միջոցով: Հեռակա կարգով քվեարկությունը կատարվում է օրենքի պահանջներին համապատասխանող քվեաթերթիկների օգտագործմամբ: Քվեաթերթիկները ուղարկվում են բաժնետերերին էլեկտրոնային կամ փոստային եղանակով, որը նաև համարվում է ընդհանուր ժողովի մասին ծանուցում:

Հեռակա քվեարկությամբ անցկացվող ժողովի որոշումն օրինական ուժ ունի, եթե քվեարկությանը մասնակցել է Վարկային կազմակերպության՝ ձայնի իրավունք տվող

տեղաբաշխված բաժնետոմսերի սեփականատերերի կեսից ավելին:

Հեռակա կարգով քվեարկության ժամանակ քվեաթերթիկները տրամադրվում են բաժնետերերին՝ լրացրած քվեաթերթիկները Վարկային կազմակերպության կողմից ընդունումն ավարտելու պահից առնվազն 30 օր առաջ: Բաժնետերերը լրացված քվեաթերթիկները ուղարկում են Վարկային կազմակերպությանը էլեկտրոնային կամ փոստային եղանակով:

8.4. Ընդհանուր ժողովի որոշումները կարող են ընդունվել այնպիսի նիստում, որի ժամանակ ընդհանուր ժողովի մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա քվեարկությամբ անցկացված նիստ չի համարվում:

Հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում անցկացվող ընդհանուր ժողովի վերաբերյալ ծանուցումն իրականացվում է սույն կանոնադրության 8.11 կետով սահմանված կարգով և ժամկետներում:

8.5. Կանոնադրության 8-րդ հոդվածի 8.8 կետի 5), 10) և 12) ենթակետերով սահմանված որոշումները ընդունվում են բացառապես տարեկան ժողովներում, բացառությամբ ստորև թվարկված դեպքերի.

1) Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

2) Վարկային կազմակերպության վերստուգողի ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Վարկային կազմակերպության վերստուգողի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

3) Վարկային կազմակերպության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը քննարկելու համար կարող է հրավիրվել արտահերթ ժողով, եթե սահմանված ժամկետում տարեկան ժողովը տեղի չի ունեցել: Նշված հարցերով հրավիրված արտահերթ ժողովում այլ հարցեր քննարկվել չեն կարող:

8.6. Տարեկան ժողովը, ինչպես նաև սույն Կանոնադրության 8.5-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված դեպքում հրավիրված արտահերթ ժողովը չի կարող անցկացվել հեռակա (հարցման) կարգով:

8.7. Բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն՝

ա) Վարկային կազմակերպության հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ իրենց պատկանող բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով,

բ) Վարկային կազմակերպության բաժնետեր չհանդիսացող խորհրդի անդամները և գործադիր տնօրենը՝ խորհրդակցական ձայնի իրավունքով,

գ) Վարկային կազմակերպության վերստուգողը,

դ) Վարկային կազմակերպության աուդիտն իրականացնող անձը (եթե նրա եզրակացությունը առկա է գումարվող ընդհանուր ժողովի նյութերում):

Վարկային կազմակերպության ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմվում է Վարկային կազմակերպության խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ Վարկային կազմակերպության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա: Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Վարկային կազմակերպության մասնակիցների ցուցակը ծանոթացման համար տրամադրվում է Վարկային կազմակերպության այն բաժնետերերին, որոնք գրանցված են Վարկային կազմակերպության բաժնետերերի ռեեստրում և տիրապետում են ընկերության բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսին: Վարկային կազմակերպության բաժնետիրոջ պահանջով Վարկային կազմակերպությունը պարտավոր է նաև նրան տրամադրել տեղեկանք՝ ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակում նրա ընդգրկման մասին:

8.8. Բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում.

- 1) կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,
- 2) Վարկային կազմակերպության վերակազմակերպումը,
- 3) Վարկային կազմակերպության լուծարումը,
- 4) ամփոփ, միջանկյալ և լուծարման ֆինանսական հաշվետվությունների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը,
- 5) Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
- 6) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,
- 7) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացումը,
- 8) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Վարկային կազմակերպության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև վարկային կազմակերպության կողմից ձեռքբերված կամ հետգնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը,
- 9) Վարկային կազմակերպության գործադիր տնօրենի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
- 10) վերստուգողի ընտրությունը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
- 11) Վարկային կազմակերպության աուդիտն իրականացնող անձի հաստատումը,
- 12) Վարկային կազմակերպության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,
- 13) ժողովի վարման կարգը,
- 14) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը,

15) Վարկային կազմակերպության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը՝ ներառյալ զանգվածային լրատվության միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով,

16) բաժնետոմսերի համախմբումը, բաժանումը,

17) Վարկային կազմակերպության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը,

18) գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ եթե գործարքի առարկա հանդիսացող գույքի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50%-ից ավելին՝ ժողովին մասնակցող բաժնետերերի ձայների $\frac{3}{4}$ -ով,

19) "Բաժնետիրական ընկերությունների մասին" ՀՀ օրենքի 9-րդ գլխով նախատեսված գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ "Բաժնետիրական ընկերությունների մասին" ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում,

20) դուստր և կախյալ ընկերությունների ստեղծումը, այդ ընկերություններին մասնակցությունը, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք է ներկայացնում,

21) սույն Կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

8.9. Բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Վարկային կազմակերպության այն բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին:

8.10. Բաժնետերերի ընդհանուր ժողովում որոշումներն ընդունվում են քվեարկելու իրավունք ունեցող բաժնետերերի ձայների օրենքով սահմանված քանակներով:

8.11. Բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարման մասին ծանուցումը՝ էլեկտրոնային և/կամ փոստային եղանակով՝ պետք է ուղարկվի ընդհանուր ժողովից առնվազն յոթ օր առաջ: Արտահերթ ժողովի գումարման համար բաժնետերերի ծանուցման առավել կարճ ժամկետ կարող է սահմանվել, եթե այդ մասին բաժնետերերի միջև համաձայնություն է կայացվել:

8.12. Վարկային կազմակերպության բաժնետերերը բաժնետերերի ընդհանուր ժողովում մասնակցելու իրենց իրավունքը կարող են իրականացնել անձամբ կամ գրավոր ձևով լիազորված ներկայացուցչի միջոցով:

8.13. Բաժնետերերի ընդհանուր ժողովներն արձանագրվում են: Ժողովի արձանագրությունը կազմվում է ժողովի ավարտից 5 օրվա ընթացքում՝ 2 օրինակով, որոնք ստորագրում են ժողովի նախագահը և քարտուղարը: Ժողովի նախագահը պատասխանատվություն է կրում ժողովի արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

Հ ո դ վ ա ծ 9. Խ ո Ր Ի Ո Ւ Ր Ղ Ը

9.1. Վարկային կազմակերպության գործունեության ընդհանուր ղեկավարումն

իրականացնում է Խորհուրդը՝ Կանոնադրությամբ և օրենքով Ընդհանուր ժողովի իրավասությանը չվերապահված հարցերի սահմաններում:

9.2. Խորհրդի բացառիկ իրավասություններն են՝

- 1) Վարկային կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը,
- 2) տարեկան և արտահերթ Ընդհանուր ժողովների գումարումը, դրանց օրակարգերի հաստատումը, ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում,
- 3) Վարկային կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը,
- 4) Վարկային կազմակերպության ներքին վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը,
- 5) Վարկային կազմակերպության հաստիքացուցակի հաստատումը,
- 6) Վարկային կազմակերպության բաժնետոմսերով միջանկյալ շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը,
- 7) Վարկային կազմակերպության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների վճարման վերաբերյալ Ընդհանուր ժողովին առաջարկությունների նախապատրաստումը,
- 8) Վարկային կազմակերպության տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և Ընդհանուր ժողովին ներկայացումը,
- 9) Վարկային կազմակերպության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը,
- 10) անհրաժեշտության դեպքում՝ Վարկային կազմակերպության իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը,
- 11) Վարկային կազմակերպության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը,
- 12) Վարկային կազմակերպության մասնաճյուղերի, ներկայացուցչությունների ու հիմնարկների և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների ստեղծումը,
- 13) այլ կազմակերպություններին մասնակցելը, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում,
- 14) Վարկային կազմակերպության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը "Բաժնետիրական ընկերությունների մասին" ՀՀ օրենքի 8-րդ գլխում նախատեսված դեպքերում,
- 15) "Բաժնետիրական ընկերությունների մասին" ՀՀ օրենքի 9-րդ գլխով նախատեսված գործարքների կնքման մասին որոշման ընդունումը և նման գործարքների

կնքումը,

16) Վարկային կազմակերպության պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը,

17) Վարկային կազմակերպության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը,

18) դուստր և կախյալ ընկերությունների ստեղծումը, այդ ընկերություններին մասնակցությունը, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում,

19) Վարկային կազմակերպության գործադիր տնօրենի վարձատրության պայմանների որոշումը,

20) Վարկային կազմակերպության վերստուգողի վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի ու պայմանների վերաբերյալ ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը,

21) "Բաժնետիրական ընկերությունների մասին" ՀՀ օրենքով և սույն Կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

9.3. Խորհրդի անդամները

9.3.1. Խորհուրդը կազմված է 7 (յոթ) անդամից:

9.3.2. Խորհրդի անդամներն ընտրվում են Վարկային կազմակերպության Բաժնետերերի տարեկան ժողովի կողմից կամ անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում՝ Բաժնետերերի արտահերթ ժողովի կողմից:

9.3.3. Խորհրդի անդամների լիազորությունները դադարում են խորհրդի հաջորդ կազմի ընտրվելուց հետո: Խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում: Ժողովը կարող է որոշում ընդունել խորհրդի ցանկացած անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

9.3.4. Խորհրդի կազմում ընտրված են համարվում ձայների առավելագույն քանակ տացած թեկնածուները:

9.3.5. Վարկային կազմակերպությունը վարում է Խորհրդի անդամների ռեեստր, որը բաց է Վարկային կազմակերպության բաժնետերերի ծանոթացման համար:

9.4. Խորհրդի նախագահը

9.4.1. Խորհրդի նախագահն ընտրվում է Խորհրդի կողմից Խորհրդի անդամների կազմից՝ իրենց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

9.4.2. Խորհրդի նախագահը՝

- 1) կազմակերպում է Խորհրդի աշխատանքները,
- 2) գումարում և նախագահում է Խորհրդի նիստերը,
- 3) կազմակերպում է Խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը,
- 4) նախագահում է Ընդհանուր ժողովում, եթե ժողովի կողմից այլ անձ չի ընտրվել

նախագահ:

9.4.3. Խորհրդի նախագահի բացակայության ժամանակ նրա պարտականությունները խորհրդի որոշմամբ կատարում է խորհրդի անդամներից մեկը:

9.5. Խորհրդի նիստերը

9.5.1. Խորհրդի նիստերը գումարում է Խորհրդի նախագահը իր նախաձեռնությամբ, Խորհրդի անդամի, Վերստուգողի, Աուդիտն իրականացնող անձի, Վարկային կազմակերպության գործադիր մարմնի պահանջով: Խորհուրդը կարող է հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով) ընդունել որոշումներ:

9.5.2. Խորհրդի նիստն իրավազոր է (քվորում ունի), եթե դրան մասնակցում են Խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելի կազմող Խորհրդի անդամները: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ: Քվեարկության ժամանակ Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայն:

9.5.3. Խորհրդի որոշումների ընդունման ժամանակ ձայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահի ձայնը որոշիչ է:

9.5.4. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո՝ 5-օրյա ժամկետում:

9.5.5. Խորհրդի նիստի արձանագրությունը ստորագրում են նիստին մասնակցող Խորհրդի բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների ճշտության և հավաստիության համար:

Հ ո ղ Վ ա ծ 1 0. Վ ար կ այ ի ն կ ա զ մ ա կ եր պ ու թ յ ա ն գ ո Ր ծ ա դ ի Ր տ ն օ Ր Ե ն ը

10.1. Վարկային կազմակերպության գործունեության ընթացիկ ղեկավարումն իրականացնում է գործադիր տնօրենը: Վարկային կազմակերպությունում տնօրինություն չի ստեղծվում: Գործադիր տնօրենը նշանակվում է ժողովի կողմից: Վարկային կազմակերպության մյուս ղեկավարները նշանակվում են գործադիր տնօրենի կողմից, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

10.2. Գործադիր տնօրենի իրավասությանն են պատկանում բոլոր այն հարցերը, որոնք օրենքով կամ սույն Կանոնադրությամբ չեն հանդիսանում Բաժնետերերի ընդհանուր ժողովի, Խորհրդի, վերստուգողի կամ գլխավոր հաշվապահի իրավասությունը:

10.3. Գործադիր տնօրենը՝

1) Վարկային կազմակերպությունը ներկայացնում է երրորդ անձանց հետ հարաբերություններում, պետական կազմակերպություններում, դատական և այլ մարմիններում,

2) կազմակերպում է ժողովի և Խորհրդի որոշումների կատարումը,

3) տնօրինում է Վարկային կազմակերպության գույքը և ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Վարկային կազմակերպության անունից,

4) բանկերում բացում է Վարկային կազմակերպության հաշվարկային և այլ հաշիվներ,

5) աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է Վարկային կազմակերպության աշխատողներին,

6) կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,

7) գործում է առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր,

8) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Վարկային կազմակերպության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Վարկային կազմակերպության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը,

9) իր իրավասությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

10) իրականացնում է օրենքով և սույն Կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

10.4. Վարկային կազմակերպության գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար կարող է նշանակվել (բացակայության դեպքում պարտականությունները կարող է կատարել) գործադիր տնօրենի տեղակալը:

10.5. Ընկերության անունից գործադիր տնօրենի հետ պայմանագիրը ստորագրում է խորհրդի նախագահը կամ խորհրդի կողմից լիազորված այլ անձ:

Հ ո ղ Վ ա ծ 11. Վ ա Ր կ ա յ ի ն կ ա զ մ ա կ եր պ ո յ թ յ ա ն վ եր ս տ ու զ ո ղ ը

11.1. Վարկային կազմակերպության հիմնադիր ժողովի որոշմամբ վերստուգող հանձնաժողով չի կազմավորվել և վերստուգող հանձնաժողովի իրավասությունները դրվել են վերստուգողի վրա:

11.2. Վարկային կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու համար ժողովն ընտրում է վերստուգող: Վերստուգողը հետևում է Վարկային կազմակերպության կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է Վարկային կազմակերպության փաստաթղթերի համապատասխանությունն օրենքներին և այլ իրավական ակտերին ու սույն Կանոնադրությանը:

11.3. Վերստուգողն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է սույն Կանոնադրությամբ, ինչպես նաև ժողովի կողմից հաստատված վերստուգողի կանոնակարգով:

11.4. Վերստուգողն իրականացնում է Վարկային կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը, ստուգում է Վարկային կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեությունը սեփական նախաձեռնությամբ՝ ցանկացած ժամանակ, ժողովի կամ խորհրդի որոշմամբ, ինչպես նաև Վարկային կազմակերպության՝ քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

11.5. Վերստուգողի պահանջով նրան պետք է ներկայացվեն Վարկային կազմակերպության, նրա մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերն ու բացատրությունները:

11.6. Վերստուգողին ընտրում է ժողովը՝ 3 տարի ժամկետով: Վերստուգողի

վարձատրության և (կամ) ծախսերի փոխհատուցման չափերը և պայմանները սահմանվում են ժողովի որոշմամբ: Վերստուգող կարող է լինել Ընկերության կառավարման մարմիններում չընդգրկված, ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին բավարարող ֆիզիկական անձ:

11.7. Վերստուգողը հաշվետու է ժողովին: Օրենքների և այլ իրավական ակտերի խախտումներ հայտնաբերելու դեպքում Վերստուգողը ժողովին է ներկայացնում հաշվետվություն՝ միաժամանակ առաջարկելով այդ խախտումների վերացման և ապագայում չկրկնման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումներ:

Հ ո դ վ ա ծ 1 2. Վ ա ր կ ա յ ի ն կ ա զ մ ա կ ե ր պ ո թ յ ա ն գ լ խ ա վ ո ր հ ա շ վ ա պ ա հ ը և հ ա շ վ ա պ ա հ ա կ ա ն հ ա շ վ ա ռ ո մ ը

12.1. Վարկային կազմակերպության հաշվապահական հաշվառումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության:

12.2. Վարկային կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները կազմվում և ներկայացվում են համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների:

12.3. Վարկային կազմակերպության ֆինանսական տարին համընկնում է օրացուցային տարվա հետ:

12.4. Վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:

Վարկային կազմակերպության հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Վարկային կազմակերպության բաժնետերերին, պարտատերերին և մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցներին Վարկային կազմակերպության մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար պատասխանատվություն են կրում օրենսդրությամբ սահմանված անձինք՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

12.5. Վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահի ժամանակավոր պաշտոնակատար կարող է նշանակվել (նշված պարտականությունը կարող է կատարել) Վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահի տեղակալը կամ գլխավոր հաշվապահի որակավորման վկայական ունեցող Վարկային կազմակերպության այլ աշխատակիցը:

Հ ո դ վ ա ծ 1 3. Վ ա ր կ ա յ ի ն կ ա զ մ ա կ ե ր պ ո թ յ ա ն ա ր տ ա ք ի ն ա ու դ ի տ ը

13.1. Յուրաքանչյուր տարի Վարկային կազմակերպությունը իր ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով ներգրավում է արտաքին աուդիտն իրականացնող

անձ, որն ընտրվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

13.2. Վարկային կազմակերպության արտաքին աուդիտն իրականացնող անձը պետք է համապատասխանի առնվազն "Աուդիտորական գործունեության մասին" ՀՀ օրենքով սահմանված պահանջներին, իսկ աուդիտը պետք է իրականացվի աուդիտի ստանդարտների համաձայն:

13.3. Վարկային կազմակերպության արտաքին աուդիտն իրականացնող անձի հետ պայմանագիրը կնքում է խորհրդի նախագահը:

13.4. Ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեցամսյա ժամկետում, Վարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում աուդիտային եզրակացությունը, ինչպես նաև հրապարակում է այն իր տարեկան ֆինանսական հաշվետվությունների հետ:

Հ ո դ վ ա ծ 1 4 . Վ ա ր կ ա յ ի ն կ ա զ մ ա կ ե ր պ ո թ յ ա ն մ ա ս ն ա ճ յ ու ղ ե ր ը և ն ե ր կ ա յ ա ց ու ց ջ ու թ յ ո ն ն ե ր ը

14.1. Վարկային կազմակերպությունը կարող է Հայաստանի Հանրապետությունում և նրա տարածքից դուրս հիմնել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

14.2. Վարկային կազմակերպության մասնաճյուղերը և ներկայացուցչությունները չունեն իրավաբանական անձի կարգավիճակ և գործում են Վարկային կազմակերպության անունից՝ վերջինիս կողմից տրված լիազորությունների սահմաններում և հաստատված կանոնադրության հիման վրա:

Հ ո դ վ ա ծ 1 5 . Վ ա ր կ ա յ ի ն կ ա զ մ ա կ ե ր պ ո թ յ ա ն լ ու ծ ա ր ու մ ը

15.1. Վարկային կազմակերպությունը կարող է լուծարվել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հիմքերով:

15.2. Վարկային կազմակերպության լուծարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված լուծարման ընթացակարգի համաձայն:

15.3. Լուծարային հանձնաժողովն ընտրվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից՝ առնվազն երեք անդամի կազմով:

15.4. Պարտատերերի հանդեպ ունեցած պարտավորությունների մարումից հետո մնացած լուծարային միջոցները բաշխվում են բաժնետերերի միջև՝ նրանց բաժնեմասին համամասնորեն:

15.5 Ա դասի արտոնյալ փոխարկելի յուրաքանչյուր բաժնետոմսի լուծարային արժեքը սահմանվում է 14,000,000 /տասնչորս միլիոն/ ՀՀ դրամ: